



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван. Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
☎ (374 11) 818 506

№ 5/07.1/52382

«20» «11» 2017թ.

<<Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն>>
ՀԿ-ի նախագահ Մ. Չաքրյանին

Հարգելի տիկին Չաքրյան

Ի պատասխան Ձեր 2017թ. նոյեմբերի 9-ի գրության հայտնում եմ, որ Օրհուսի կոնվենցիայի Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների վերաբերյալ Ուղղումը մինչ այժմ չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից: Օրհուսի կոնվենցիայի Ուղղումը նախատեսում է՝ որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության իրավունքը, այն տարածելով այնպիսի որոշումների վրա, ինչպիսին է գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հայաստանյան շուկա ներդրումն ու տեղաբաշխումը:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կարթագենյան արձանագրությունը, իրականացնում է գործընթացներ, որոնք համահունչ են Օրհուսի կոնվենցիայի գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների վերաբերյալ Ուղղման նպատակներին և խնդիրներին, մասնավորապես՝ մշակվել է <<Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության, կենսասանվտանգության մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, ինչը սակայն, հետ է կանչվել Ազգային ժողովից:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել Ուղղումը սակայն, Հանրապետությունում իրականացվում են գործընթացներ, որոնք կարևորում են հասարակության մասնակցությունը՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության, տեղաբաշխման, կենսասանվտանգության խնդիրների լուծման գործընթացում:

Հարգանքով՝

Հ. Հովհաննիսյան

ՀՀԿԿ
Տ.Սմբատյան
011 818 517

